ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 17-ը հունվարի 2019թ.
ժամը 11^{30}

Մասնակցում էին՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետի ՊԺԿ Ա. Նազարյան,

գնահատողներ՝

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան,

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի սպա, բ/ծ մայոր Մ. Գալստյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան:

Քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակիցների՝ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն: Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հանձնաժողովի կողմից չի գնահատվել:***

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հրավերով նախատեսված պահանջներին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, ***բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.***

«Եվրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից 26-րդ չափաբաժնի մասով ներկայացված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում անհրաժեշտ է ներառել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի մաս կազմող տեղեկատվությունը՝ մասնավորապես՝ 1-ին կետը՝ (դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետներին վերաբերող) և 4-րդ կետը՝ (որակի սերտիֆիկատի և ներկրման թույլտվության մասին) տեղեկատվությունները:

«Ջի Թի Սի» ՍՊԸ-ի կողմից ***14-րդ չափաբաժնի մասով*** ներկայացված առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին մասնավորապես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 2 մայիսի 2013թ. N502-Ն որոշման համաձայն պետական մարմինների կողմից գնումների պլանում կարող են ներառվել միայն Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) ընդգրկված դեղերը, հետևաբար, պետական գնումների առարկա կարող են հանդիսանալ միայն այն դեղամիջոցները, որոնք ներկա պահին Հայաստանի Հանրապետությունում ունեն պետական գրանցում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից առաջարկված ***«Ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ), amoxicillin (amoxicillin trihydrate), clavulanic acid (potassium clavulanate)»*** դեղը գրանցված չի ՀՀ-ում՝ ներառված չեն դեղերի պետական գրանցամատյանում, ուստի դրանք չեն կարող դառնալ պետական գնումների առարկա: Անհրաժեշտ է սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունը և ներկայացնել ՀՀ-ում գրանցված տարբերակը:

«Լիկվոր» ՓԲԸ-ի կողմից 27-րդ և 31-րդ չափաբաժինների մասով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում անհրաժեշտ է ներառել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի մաս կազմող տեղեկատվությունը՝ մասնավորապես՝ 1-ին կետը՝ (դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետներին վերաբերող) և 4-րդ կետը՝ (որակի սերտիֆիկատի և ներկրման թույլտվության մասին) տեղեկատվությունները:

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ ***22-րդ չափաբաժնի*** մասով առաջարկվող ապրանքի ***«անվանումը»*** դաշտում անհրաժեշտ է ամբողջական գրել առաջարկվող ապրանքատեսակի անվանումը:

«Տոնուս-Լես» ՍՊԸ-ի կողմից ***6-րդ և 42-րդ չափաբաժինների*** մասով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում անհրաժեշտ է ներառել ««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի մաս կազմող տեղեկատվությունը՝ մասնավորապես՝ 1-ին կետը՝ (դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետներին վերաբերող) և 4-րդ կետը՝ (որակի սերտիֆիկատի և ներկրման թույլտվության մասին) տեղեկատվությունները:

- անհաժեշտ է շտկել ***6-րդ չափաբաժնի*** մասով առաջակվող **«Դեքսամեթազոն 4մգ/մլ, 1մլ»** ապրանքատեսակի ***ծագման երկիրը՝*** համապատասխանեցնելով դեղերի գրանցամատյաում առկա տեղեկատվության հետ:

Հիմք ընդ ունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/9» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ***«Տոնուս-Լես» ՍՊԸ, «Լիկվոր» ՓԲԸ-ի, «Արֆարմացիա» ՓԲԸ-ի, «Եվրոֆարմ» ՍՊԸ և «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի*** կողմից ներկայացված շտկումների քննարկման վերջնաժամկետի հաջորդ օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Նազարյան
Գնահատող	Վ. Վահանյան
Գնահատող	Մ. Գալստյան
գնահատող	Հ. Ավետիսյան
Հանձնաժողովի քարտուղար	Ա. Մաղաքյան